



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ՍՈՆԹՊԵԼԼՈՅԻ Ա. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀՈՎԻՆԵՐԵՆ ԱՐԺ. Տ.
ՆԱՐԵԿ ՔՆՆՅ. ՓԵՅԼԻՎԱՆԵԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԲ ԱՄԱԳՈՒԹԵԱՆ
ՏԻՏՂՈՍԻՆ**

Կիրակի, 20 Յունիսին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան հանդիսապետեց Սոնթեպելլոյի Ա. Խաչ Մայր Տաճարի Ա. եւ Անմահ Պատարագին եւ օրուան պատգամը փոխանցեց հաւատացեալներուն: Ան յայտնեց, թէ ընդառաջելով Թեմիս Կրօնական Ժողովի ու իր խնդրանքին, Ա. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս «Աւագութեան» տիտղոս շնորհած է եկեղեցւոյ հովիւներէն Արժ. Տ. Նարեկ Քնյ. Փեյլիվանեանի՝ գնահատելով անոր մատուցած ծառայութիւնը Կիլիկեան Ա. Աթոռի գանազան Թեմերուն մէջ:

«Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ Վեհափառ Հայրապետին կոնդակը խորան բերուեցաւ եւ ընթերցուեցաւ հաւատացեալներուն յոտնկայս ունկնդրութեամբ:

Ապա, Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատանքի ու շնորհաւորանքի խօսքը արտասանեց, որմէ ետք Տեր Հայրը շնորհակալական խօսքով հանդէս եկաւ: Արարողութենէն ետք, ներկաները «Թումանճեան» սրահին մէջ հիւրասիրուեցան եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ:

Նշենք, որ Զահանայ Հայրը 26 տարիներու ծառայութիւն ունի մեր եկեղեցւոյ: Ան ծառայած է Կիպրոսի, Զանատայի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան ու Արեւմտեան Թեմերուն մէջ:

**PRELATE HONORS PASTOR OF HOLY CROSS CATHEDRAL
REV. FR. NAREG PEHLIVANIAN WITH THE TITLE OF
ARCHPRIEST**

On Sunday, June 20th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy at Holy Cross Cathedral in Montebello and delivered the sermon. The Liturgy was celebrated by Rev. Fr. Nareg Pehlivanian.

During the service, the Prelate presented Rev. Fr. Nareg with a Pontifical Encyclical honoring him with the title of Archpriest. With the singing of a hymn,

the Pontifical Encyclical was brought to the altar and the faithful were invited to stand for the reading of the Encyclical. During his sermon, the Prelate commended Rev. Fr. Nareg's twenty-six years of service to the Armenian Church and people, praying for the Lord to continue to lead him in his service to his flock.

Following the sermon, Rev. Fr. Nareg expressed his thanks to His Holiness and the Prelate for the honor.

At the conclusion of the service, a reception organized by the parish Ladies Auxiliary was held at Tumanjian Hall.